

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: info@artsakhlis.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական
Երիտասարդական
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՅ մշակույթի Եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՅ կրթության, մշակույթի Եւ սպորտի նախարարություն
ՀՅ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման
կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՅ մշակույթի Եւ երիտասարդության պալատ

«Ազգ Եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Մեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Պարաբաղի Յանրապետության
հոչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

- Ա. Խանյան -քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
գիտության վաստակավոր գործիչ
- Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
- Ա. Մինիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
- Ը. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
- Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում գետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած
Յամահայկական երիտասարդական գիտաժողովի գեկուցումները

յուն ունեն, քանի որ Եվրասիական տարածքի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական վերահսկողությունն անհար է իրականացնել առանց համապատասխան վերահսկողության «Եվրասիական Բալկաններում»:

Այս պարագայում եապես մեծանում է Լեռնային Ղարաբաղի աշխարհաքաղաքական դերակատարման նշանակությունը, որը Յ. Սակինդերի առաջ քաշած աշխարհաքաղաքականության հիմնական օրենքի վերածևակերպված տարբերակով ընդունում է հետևյալ տեսքը. Նա, ով վերահսկում է Լեռնային Ղարաբաղը, վերահսկում է Ղարավային Կովկասը, Ղարավային Կովկասը վերահսկելով, վերահսկողության տակ է հայտնվում «Եվրասիական Բալկանները», «Եվրասիական Բալկանները» վերահսկող գերակայում է Եվրասիա մայրցամաքում, իսկ Եվրասիան վերահսկողը վերահսկում է ամբողջ աշխարհը: Այնպես որ, որոշակի նպաստավոր աշխարհաքաղաքական գարգացումների արդյունքում, լեռնային Ղարաբաղի Ղանրապետությունը ի գորու է ոչ միայն տարածաշրջանային, այլ նաև համերկրային մասշտաբով աշխարհաքաղաքական հենակետից վերաճելու գեոստրատեգիական ակտիվ գործող դերակատարի, լիակատար պատասխանատվություն ստանձնելով աշխարհում խաղաղության և կայունության հաստատման գործում:

Նորայր Շովանեփյան Արդի

Խորհրդային կարգերի մուտքն Անդրկովկաս.
Դրա հետեւանքները ԼՂ-ի համար

Անկախ ամեն տեսակի թեր եւ դեմ կարծիքներից՝ անվիճելի է, որ 1920-1921թթ. Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ ծավալված իրադարձությունների մեջ զգալի նշանակություն ունեցավ Ադրբեջանի խորհրդայնացումը: Դետեւաբար, արժե եւս մեկ անգամ անդրադառնալ այդ խնդրին՝ ի՞նչ ուժեր էին կանգնած դրա հետեւում եւ ի՞նչ ակնկալիքներ ունեին դրանից: Մեր կողմից քննարկվող թեմայից ելնելով՝ առավել կարեւոր է այն, թե այդ ակնկալիքների մեջ ի՞նչ տեղ էր գրադեցնում Ղարաբաղը:

Ադրբեջանի խորհրդայնացման փաստը տարբեր կերպ է մեկնաբանվում պատմագիտական գրականության մեջ: Ընդ որում՝ որոշ հեղինակներ այստեղ մեղքի մի զգալի բաժին են հատկացնում նաև

Դարաբաղին: Հարցը, սակայն այս է՝ Աղրբեջանի կառավարությունը ցամկանո՞ւմ էր դիմադրել, թե՞ ոչ: Հայապարակի վրա առկա փաստերը հիմք են տակիս ավելի շատ երկրորդ տեսակների օգտին հակվելու:

Աղրբեջանի խորհրդայնացման մեջ մեծ դեր ուներ նաեւ Թուրքիան եւ ամենամբ՝ Մ. Քենալը: Թուրք-աղրբեջանական մի շարք հեղինակներ Աղրբեջանի խորհրդայնացման գործում Թեմալի ունեցած ավանդի համար նրան մինչեւ իսկ մեղադրում են Աղրբեջանի նկատմամաբ դավաճանության մեջ: Բայց իրականում դա ընդամենը թուրքական նկուն դիվանագիտության ստեղծած պատրանքն էր: Փորձենք ուեալ գնահատենք իրավիճակը: Նշված ժամանակահատվածում քենալականները ստիպված էին օրիհասական կրիվներ նոել արեւմտյան ճակատում՝ ունենալով ընդամենը 90 հազարանոց բանակ: Թուրքական կայսրության տարածքների գգալի մասը դուրս էր քենալականների վերահսկողությունից: Ի լրում՝ աճում էին նաեւ թուրքական տիրապետության տակ գտնվող ազգային փոքրանամությունների հակաբուրքական տրամադրությունները: Բնական է, որ նման պարագայում Թուրքիայի «բոլյուտվությունը», որ Ուստաստանը խորհրդային կարգեր ներնուծի Աղրբեջան, առավել քան ծեւական բնույթ էր կրում:

Տրամաբանական հարց է ծագում. արդյոք Ուստաստանը իսկապես ծգու՞մ էր Թուրքիայի հետ հարաբերությունների ներծեցմանը: Այո՛, եւ դրա համար ուներ բավական հիմնավոր պատճառներ: Չիշենք, որ տվյալ ժամանակահատվածում Արեւմուտքում սոցիալիստական հեղափոխությունների ժավավճան հեռանկարն այլևս իրական լինել չէր կարող, եւ դա բավական պարզ պատկերացնում էին նաեւ բոլշևիկյան նեկավարները: Սակայն նրանք միենալուն ժամանակ համոզված էին, որ Ուստաստանը միայնակ չի կարող հակադրվել ողջ կապիտալիստական համակարգին, եւ սոցիալիզմը այսպես ասած արտահամելու անհրաժեշտությունը դիտվում էր առաջնային խնդիր: Բնականաբար, եթե հնարավոր չէ դեպի Արեւմուտք, Ուստաստան իր ուժերը պետք է փորձեր Արեւելքում:

Իսկ բե ի՞նչ դեր էր վերապահված Հայաստանին եւ հայ ժողովրդին ուսւ-թուրքական հարաբերությունների համատեքստում՝ բավական դիպուկ բնորոշել է ակադեմիկոս Լ. Խուրշույյանը. «Ուստական եւ թուրքական կայսրություններն ունեն մեկ ընդհանրություն. Երկուսի ազգային գաղափարախոսության հիմքում էլ տարածքային նվաճումների՝ «հողահավաքի» քաղաքականությունն է: Հայաս-

տանը գտնվում է այդ երկու կայսրությունների նվաճողական-ուսզմավարական ծրագրերի ընդհարման սահմանագծում»:

Ինչո՞ւ այդքան հանգանանորեն անդրադառնը հատկապես Աղրբեջանում ծավալված իրադարձություններին եւ այնտեղ խորհրդային կարգերի հաստատման հետ կապված մանրամասների բննարկմանը: Հետագա զարգացումները ցույց տվեցին, որ նոր, խորհրդային Աղրբեջանն իրականում շարունակում էր նախկին, նույսավարական կառավարության կողմից հաստատված քաղաքականությունը: Ընդ որում՝ աղրբեջանական պառակեմենտը շարունակում էր աշխատել գրեթե նախկին կազմով. գրեթե անփոփոխ էին մնում նաեւ տեղական կառավարման մարմինները: Ավելորդ է ասել, որ Աղրբեջանի խորհրդայնացումը ոչինչ չփոխեց իր հարեւաններից, մասնավորապես՝ Հայաստանից ունեցած նրա տարածքային հավակնությունների մեջ: Փոխվեց պարզապես այն, որ եթե թիզ առաջ դա իրականացվում էր համարութքական ծրագրերի դրոշի, ապա նոր իրավիճակում նույն քաղաքականությունն առաջ էր տարգում «համաշխարհային հեղափոխության» հաղթանակին նպաստելու քողի տակ: Իսկ Ղարաբաղը բանալային դերակատարություն ուներ այդ քաղաքականության մեջ՝ որպես Նախիջենան-Զանգեզուր գոտու շարունակություն: Այդ հարցը վաղուց արդեն դուրս էր բերվել գոտու հայ-աղրբեջանական հարաբերությունների ոլորտից եւ դիտարկվում էր շատ ավելի լայն, աշխարհաբարձրական զարգացումների համատեքստում: Եթե բննարկվող իրողությունը դիտարկենք վերը նշված տեսանկյունից, ապա Աղրբեջանի խորհրդայնացումը նախանշում էր դարաբարյան խորի կարգավորման գործընթացում նոր, շատ ավելի հզոր ուժերի ներգրավում՝ ի դեմք քենալական Թուրքիայի եւ բոլշևիկյան Ուստաստանի: Սրանցից յուրաքանչյուրը տարածաշրջանում եւ ընդհանրապես հետամուտ էր սեփական ծրագրերի իրականացմանը, իսկ հայկական գործոնը նրանց դիվանագիտական խաղերում դիտվում էր որպես մանրադրամ:


Այսպիսով, եթե ամփոփենք վերը շարադրվածը, կստացվի ևետեւյալ պատկերը: Աղրբեջանի խորհրդայնացումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ թուրքական դիվանագիտության նկուն խաղ: Դա, անշուշտ, կարող էր իրագործվել նաեւ առանց քենալականների միջանտության: Թուրքիան պարզապես կարողացավ Ուստաստանին «նվիրել» այն, ինչը վերջինս կարող էր վերցնել առանց դժվարության, եւ, անշուշտ, ոչ ծրի: Ուստաստան ընդունեց Թուրքիայի առաջարկած խաղը՝ իր նկատառումներից: Արդյունքում Աղրբեջանը ոչ միայն

պահպանեց իր անկախությունն ու տարածքային ամրողականությունը, այլև կարող էր միանգամայն իրական հավակնություններ ունենալ՝ դեռևս չխորհրդաբացված հարեւանների հաշվին: Թուրքիան եւս քիչ անց սկսեց շահարկել այդ գործոնը. այն, ինչն առանց Ոտասատանի հետ հարաբերությունները փչացնելու վտանգի թուրքիան չեր կարող պահանջել իր համար, կարող էր շատ ավելի հեշտ պահանջել խորհրդային Ադրբեջանի համար: Ինչը եւ նա քիչ անց սկսեց իրականացնել մեծ հաջողությամբ:

Եվս մի հետաքրքիր մանրանասն, որն առաջին հայացքից կարող է ընդամենը մանրութ թվալ, բայց դրանով իսկ արդեն կանխորոշվում էր տարածաշրջանում խորհրդային Ոտասատանի քաղաքականությունը: Բանն այն է, որ վերացնելով Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը եւ հիմնելով, փաստորեն, նոր պետական միավոր՝ ի դեմս ԱդրիսՄԴ-ի, խորհրդային Ոտասատանը պահպանեց նախկին պետության «Ադրբեջան» անվանումը՝ շատ լավ իմանալով հանդերձ, որ այդ ամունն իրականում ոչ մի կապ չունի այդ տարածքի հետ: Այլ կերպ ասած՝ Սոսկվան 1920թ. մարտին արդեն բավական հստակ ծրագրի ուներ դեպի Արեւելք հեղափոխության տարածման համար Անդրկովկասում որպես հենակետ արտազգային կենտրոն ստեղծելու վերաբերյալ: Արդեն «Պայքար» թերթի 1920թ. ապրիլի 30-ի համարում մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ բավական պարզ ու հատակ նշվում է.

«... Արեւելքում խորհրդային քաղաքականությունն ուղղված է դաշինքի՛ ուժեղ պանխախմիստական ռեակցիայի հետ, Անդրկովկասում՝ ուժեղ թուրքական ռեակցիայի հետ»: Առաջ է գալիս «Մեծ Ադրբեջանի» ստեղծման գաղափարը: Ընդ որում՝ եթե 1918թ. Թուրքիան «Ադրբեջան» պետությունը ստեղծեց պանրուրիզմի ծրագրի իրականացման համար, ապա Բուլասատանը, ստեղծելով ԱդրիսՄԴ-ն, փաստորեն, որքան էլ տարօրինակ ինչի, շարունակեց նույն թուրքական քաղաքականությունը՝ յուրովի մեկնաբանելով այդ իրողությունը: Բնական հարց է ծագում. իսկ ի՞նչ տարածքների վրա պետք է ստեղծվեր այդ «Մեծ Ադրբեջանը»: Բնականաբար, այդ տարածքները այս կամ այն կերպ պետք է վերցվեր տեղի ազգային պետական միավորներից: Այլ կերպ ասած՝ հայկական մի շարք տարածքների կորուստն արդեն իսկ կանխորոշված էր:

ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,


ПОЛИГРАФ